ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

Համառոտ բովանդակություն

- *Ձևավորող գնահատման քայլաշարը*
- *Ձևավորող գնահատման մեթոդաբանությունը*
- *Նախնական և ընթացիկ հայտորոշիչ թեստերի հատկորոշիչները*
- *Նախնական և ընթացիկ հայտորոշիչ թեստերի առանձնահատկությունները*
- *Թեստի արդյունքների վերլուծությունը կոնկրետ օրինակների վրա*

Ձեւավորող գնահատման քայլաշարը



Հայտորոշիչ թեստի նպատակը

Հայտորոշիչ թեստը հայտորոշման գործիք է, որի հիմնական նպատակը ուսուցման փուլի սկզբում կամ ընթացքում նյութի յուրացման աստիճանը որոշելն է՝ սովորողների կարիքները հստակեցնելու և ուսուցման գործընթացը բարելավելու նպատակով:

Ի՞նչ է թեստի հատկորոշիչը

Հատկորոշիչները կազմում են յուրաքանչյուր թեստի տեսական հենքը և տեղեկություն են տալիս հետևյալի մասին՝

- դասարան
- նպատակ
- թեմա կամ թեմաներ
- ստուգվող վերջնարդյունքներ
- առաջադրանքի տիպ
- հարցերի տեսակներ
- հարցերի քանակ
- բարդության աստիճան
- թեստի կատարմանը հատկացվող ժամանակ

Նախնական և ընթացիկ հայտորոշիչ թեստերի ընդհանրություններն ու տարբերությունները

- Ստուգվում են սովորողների ընդհանրական /ֆոնային/ գիտելիքները անցած թեմաներից:
- Առաջադրանքները վերաբերում են անցած տարբեր թեմաների:
- Բարդության աստիճանը պետք է լինի պարզից բարդ:
- Տևողությունը հարաբերականորեն երկար է:

- Օգտագործվում են տարբեր տիպի՝ բազմակի ընտրության, լրացման, կարճ պատասխանով, համապատասխանեցման առաջադրանքներ:
- Հարցերը պետք է ձևակերպվեն կարճ, պարզ և մատչելի:

- Ստուգվում են մեկ (ամենաշատը՝ երկու) հիմնական գիտելիքներ կամ հմտություններ:
- Առաջադրանքներն ունեն որոշակի ուղղվածություն և վերաբերում են նույն թեմային:
- Առաջադրանքների ձևը բխում տվյալ թեմայի ուսուցման նպատակից:
- Բարդության աստիճանը պետք է լինի պարզից միջին, այնպես, որ սովորողների մեծ մասի կողմից թեստը հաղթահարվի:
- Տևողությունը համապատասխանաբար կարճ է՝ մինչև 15 րոպե:

Ընթացիկ հայտորոշիչ թեստի եւ հատկորոշիչների օրինակ

Դասարանը՝ ***4-րդ***

Նպատակը՝ ***լեզվական գիտելիքի ստուգում***

Առաջադրանքի ուղղվածությունը՝ ***ուղղագրություն, բառապաշար***

Վերջնարդյունքները՝ ***գիտելիքը կիրառելու կարողություն***

Բարդության աստիճանը՝ ***պարզ***

Առաջադրանքների տիպը՝ ***մեկ ճիշտ պատասխանով, համապատասխանեցում***

Հարցերի քանակը՝ ***2***

Առաջադրանքին հատկացվող ժամանակը՝ ***10 րոպե***

1. Արտագրի՛ր ընդգծված բառերը՝ դատարկ վանդակի փոխարեն լրացնելով բաց թողած տառը կամ տառակապակցությունը:

*կարապների *ռամ ընձու*տի նկար*
գեղեցիկ արևածա դար*ին Սարգիս*

2. Գտի՛ր և համապատասխանեցրու՛ տրված բառերի հականիշները:

ցերեկ	*նեղ*
փոքր	*կարճ*
գեղեցիկ	*տգեղ*
լայն	*գիշեր*
մեծ	*երկար*

Ընթացիկ հայտորոշիչ թեստի ստուգում



1. *Ստուգվող բառերը գտի՛ր նախադասություններում:*

- Կռունկները երամ – երամ չվեցին տաք երկրներ:
- Մեր կենդանաբանական այգում ընձուղտներ չկան:
- Ցուցահանդեսում ներկայացված են հայ դարբինների գեղեցիկ աշխատանքները:
- Այսօր արևածագը 6:18 րոպեին էր:

2. Հականիշ բառերը կարելի է գործածել նույն նախադասության մեջ:

- Գիշեր – ցերեկ լսվում է գնացքների անիվների ձայնը:
- Վարդավառին մեծ ու փոքր դուրս են գալիս փողոց:
- Երեխաները Զատկի ծառից կախեցին լայն ու նեղ ժապավեններ:
- Ձմռանը մեզ մոտ լինում են երկար, ամռանը՝ կարճ գիշերներ:
- *Գեղեցիկ* և *տգեղ* բառերի արմատը *գեղ*-ն է:

Այսպիսով...

Հայտորոշիչ թեստը միտված է բարելավված ուսուցմանն ու ուսումնառությանը: